ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------

«01» ---09---2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

VII^{բ} դասարան

Սարգսյան Արմինե Ժիրայրի

«2023- 2024» ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 35 աշակերտից՝ 18-ը՝ աղջիկ, 17-ը՝ տղա: Դասարանում կան բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներ, ինչպես նաև շնորհալիներ սպորտի ոլորտում: Դասարանի ավագն է Սերգեյ Հայրիյանը, ընտրվել է նաև աշակերտական ակտիվ՝ 5 հոգուց բաղկացած:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Կազմակերպել այցելություններ եկեղեցիներ, հանդիպումներ հոգևորականների հետ, աստվածաշնչյան ընթերցումներ իրականացնել:

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Կազմակերպել այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ, թատրոններ, պատմամշակութային վայրեր: Անցկացնել զրույցներ հայ և համաշխարհային անվանի մարդկանց մասին

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:

Ճանաչել և իմանալ հայոց պետական խորհրդանիշները, ազգային հերոսների անունները, ազգային տոները: Անցկացնել հայրենասիրական երգերի լսումներ:

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Խոսել անձնական հիգիենայի, օգտակար և վնասակար սովորությունների, օրվա ռեժիմի, առավոտյան նախավարժանքի, սպորտով զբաղվելու կարևորության, ինչպես նաև ֆիզկուլտուրայի դասին ակտիվ մասնակցելու մասին:

Աշխատանքային դաստիարակություն *խնդիրները՝*
Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Զրուցել մասնագիտությունների, արհեստների և դրանց կարևորության մասին: Կազմակերպել հանդիպումներ տարբեր մասնագիտության տեր ծնողների հետ:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում

Բնության պահպանությունը ոչ միայն ներկայի, այլև ապագայի կարևորություն է: Անհրաժեշտ է հոգալ բնության ամեն մի մասնիկի համար, պահպանել մայր բնությունը:

Դպրոց-ընտանիք կապը *Խնդիրները՝*

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:

Ծնողներին մշտապես տեղեկացնել աշակերտների առաջադիմության, ինչպես նաև հետընթացի մասին, ակտիվ կապ պահպանել դասավանդող ուսուցիչների և ծնողների միջև:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Երկուշաբթի	8-րդ ժամ		

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Գիտելիքի օր		
II	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները		
III	Փոխադարձ հարգանք		
IV	Իմ անկախ հայրենիքը		
V	Հանդուրժողականություն		
VI	Ուսուցչի անձնական օրինակը		
VII	Ո՞վ է իսկական ընկերը		
VIII	Աշնան գույները		
IX	Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք մի երկրում		
X	Կոնֆլիկտի լուծման տարբերակները		
XI	Մեզ անհրաժեշտ են փոփոխություններ		
XII	Ձմեռնամուտ		
XIII	Պաշտպանական միջոցներ արտակարգ իրավիճակներում		

XIV	Անկեղծության կարևորությունը առօրյայում		
XV	Ամանորի խորհուրդը		
XVI	Նոր տարում՝ նոր ձգտումներ		
XVII	Ուժեղ լինել, նշանակում է...		
XVIII	Հայոց բանակի կարևորությունը		
XIX	Մեզ շրջապատող մարդիկ, մեր հարևանները		
XX	Ու՞մ եմ ես վստահում		
XXI	Եկեղեցական տոները		
XXII	Մայրենիի օր		
XXIII	Գարնանամուտ		
XXIV	Կնոջ դերն ընտանիքում		
XXV	Ազնվություն, հավատարմություն		
XXVI	Մասնագիտության առաջնային ընտրությունը		
XXVII	Մայր. բանաստեղծությունների ընթերցում		
XXVIII	Ինչպե՞ս համատեղել օգտակարն ու հաճելին		
XXIX	Ի՞նչը կարող է ուրախություն պարգևել		
XXX	Հիշում ենք և պահանջում		
XXXI	Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն		
XXXII	Հաղթանակներ		
XXXIII	Տարվա ձեռքբերումներ		
XXXIV	Դասագրքերի հավաքագրում		